հասակ նորահարսների արհեստական ականջները հիւսում են գոյնզգոյն մանր յուլունքներով և մէջ ընդ մէջ մեխակներով, որ առաւել գեղեցիկ և անուշահոտ երևան իրենց ամուսինների աչքերին։ Ուտիացի կանայք ընդհանրապէս խնայող և սակաւապետ են. նրանց ամէն օրուայ գործածական հագուստները լինում են աժանագին չթից։ Իսկ տօն օրերին, Զատկին, Ծննդեան մեծ տօներին, հարսանիքներին և ուխտագնացութեան ժամանակ հագնում են զուտ մետաքսէ գոյնզգոյն թանկագին շորեր։ Ուտիացի Հայ կանայք հագնում են կարճ բաճկոն, որի թևերի վրայ՝ արմունկից սկսած մինչև ձեռքի թաթերը, շարում են երկու շարք արծաթէ կոճակներ, որոնք մի առանձին փայլ և գեղեցկութիւն են տալիս այդ հագուստին։ Իսկ բաճկոնի տակից հագնում են շապիկ և չափազանց լայն վարտիկ, որ միևնոյն ժամանակ շրջազգեստի ձև է ստանում և նրա պաշտօնն է կատարում։ Ուտիացի կանայք գուլպայ գործելու և պանիր պատրաստելու արհեստից միանգամայն զուրկ են. նրանք միայն կարողանում են բրդից թել մանել, ջուալ, խուրջին և մետաքսէ սիրուն վերմակներ գործել։ Ձեռագործի և կար ու ձևի մէջ շնորհ և ընդունակութիւն ունեցող մեր յարգելի տիկիններն ու օրիորդները եթէ ամառնային արձակուրդներին շրջէին Ուտիացոց երկրում, ահագին և փրկարար գործ կարող էին կատարել։ Իրենք մի կողմից կհանգստանային և կկազդուրուէին, իսկ միւս կողմից՝ անային ոմտեսութեան վերաբերեալ նորանոր բաներ կսովորե-